

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Ա.

ՎՐԷԺԻՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Տեսէք թէ ինչպէս Համիտա, Նասրիէ թաղէն, Գաշիւրէի Սուքէ-Աթթարիի վարդի անուշահոտութեանց հանրածանօթ վաճառորդին կ'ինը, վրէժը լուծեց իր ամուսին Հասան Էֆէնտիէն, որ եօթը տարիէ ի վեր երկու անգամ իսկ իրեն թոյլ չէր տուած ոտքը տանը սեմէն դուրս հանելու եւ որ բոլոր պատուհաններուն թելավանդակներուն կախափականք դնել տալէ յետոյ, բանալին դրան կղզւանքին մէջ երկու անգամ կը դարձնէր, պաշտօնատունը երթալէ առաջ:

★ ★ ★

«Հապիպի՛, ըսաւ անոք օր մը Համիտա, Հապիպի՛, ի սէր արեւուդ, ի սէր աչքերուդ, ի սէր օրուան սա աղուոր լոյսին, շնորհք ըրէ որ ներկայ բլլամ զարմուհիիս Ֆաթմային. հարնիքին: Եօթը տարիէ ի վեր, հապիւ անգամ մը տեսած եմ ազգականներս, և այս ամուսնութիւնը ինձի համար մէկ հատիկ առիթ մըն է ընտանիքս եւ բոլոր բարեկամուհիներս տեսնելու»:

«Ինչ վախ կրնաս ունենալ, Էֆէնտի. ծոցդ միթէ հոն պիտի չըլլա՞ն վրաս հսկելու համար եւ Աղաները միթէ խոտօրէն չե՞ն պաշտօնանք հարէմին դուրս»:

Բայց քանի կը խօսէր, Հասան Էֆէնտիի գէմքը կը մոռլոտէր՝ ինչպէս երկինք

քը խամսինի օր մը երբ Թանձր ամպեր աւրելը կը ծածկեն:

— «Ո՛չ, պատասխանեց դաժան ու կտրուկ շեշտով մը: Ո՛չ, պիտի չերթաս այդ հարնիքին, ոչ ալ ուրիշ ո եւ է հարնիքի: Ես կ'ատեմ այդ համախմբուածները ուր ամէն սեսակ միջնորդ կ'ինքր պարկեշտ կանացի մէջ կը սպրդին ինչպէս գայլերը ոչխարներու հօտի մը մէջ»:

Ու վէճը կարճ կապելու համար, յանկարծակի դուրս ելաւ՝ գուռը ետեւը բալլելով գոցելով:

Արցունքի խոշոր կաթիլներ մանկամարդ կ'ընջ կ'ընջ ու վարդերանգ ալոյրն ակօսեցին, ու եկան կանգ առնել բարկութենէն գողացող շրթներուն անկիւնը: Կատարօրէն սրբեց արցունքներն ու ըսաւ, գրեթէ բարձրաձայն.

— «Վրէժս պիտի լուծեմ քու կտակածներուդ համար, այս արգելափակումին եւ գոցուակ ձանձրոյթին համար իմ կեանքիս զորքու նախանձոտութիւնդ անարեւ օրուան մը նման ըրած է. ինչ հոգս եթէ ատով կեանքս իսկ կորսնցնեմ»: Ու վաղեց իր պատուհանին առջեւ կեցաւ, վառ գի Պէյլին մէկը սովոր էր այդ ժամուն անցնիլ այդ փողոցէն իր գրասենեակը երթալու համար:

Նոյն պահուն, իր տան դիմացի կողմը, հարիւր մէթը մը վերօք, գուռ մը բացուեցաւ, ու վեղեցիկ երիտասարդ մը գուռն ելաւ, նրբահասակ, վալելու, դէմքը լուսնի պէս վլոր, ծիծղուն բերնով, եւ աչուրներով ուր, թարթիչներու երկար ծոպին տակ, ոսկի կէտեր կը կայծկլտային:

Փողոցին միւս կողմն անցաւ շուքին

մէջէն քալելու համար, եւ՝ ինչպէս ամէն օր կ'ընէր՝ անցաւ Համիտայի պատուհանին առջեւէն, որուն ուռուցիկ թեւավանդակը փողոցին վրայ կ'երկարէր: Համիտա շուտ մը քանի մը ձիւղ փրցուց ռեհանի խորձէն որ կուտին բերանը իբր խից էր դրուած, և անոր ոտքերուն առջեւ նետոց: Երիտասարդը գլուխը վեր վերցուց, բայց թեւավանդակին մէջէն ոչինչ չշմարեցով՝ ճամբան շարունակեց՝ այդ անուշահոյր տերեւենբուն անկումը դիպուածին վերագրելով:

Հետեւեալ օրը Համիտա ափ մը յասմիկ նետոց անոր: Այս անգամ այլ ևս կարելի չէր տարակուսիլ, ծաղկանց անձրեւը իրեն համար էր: Անոնցմէ մին վերցուց գետնէն ու լամբակին անոցոց:

Յաջորդ օրը, Համիտա վարդի կոկոն մը նետոց անոր, կարմիր ինչպէս իր այտերը: Երիտասարդը առաւ զայն ու շըրթներուն տարաւ, ինչ որ անշուշտ ըսել կ'ուզէր.

«Գեղանի՛ անձանօթուհի, անտարբեր չեմ քու բարեկամական ցոյցերուդ, ու եւթէ միջոցն ունենալիս...»

Այս ծաղկաբոյր խօսակցութիւնը շարունակեց դեռ քանի մը օր, յետոյ Համիտա նետոց անոր պլորուած թղթիկ մը որուն վրայ ան կարդաց հետեւեալը.

«—Եթէ կ'ուզես գիտ տեսնել, շաբաթ օրը սպասէ՛ ինձի, առանձին, դրան ետին, փողոցը տանդ առջեւ առատօրէն ոռոգել տալէ յետոյ:

★ ★ ★

Այդ օրը, երբ Հասան էֆէնտի նախարարութենէն տուն դարձաւ, կ'իյնէր անկողնին մէջ պառկած գուռ, ճակատը թաշկինակով քրկապած, ողբալի երեւոյթով, ու աչքերը արցունքէ կարմրած: Անկողնին մօտ, իր դայեակը, Ամինա, պղնձէ կրակարանի մը վրայ ծաած, աղ կը պալթէր ցնէր ու խունկ կը վառէր, աղօթքնի մը մըլուով, չար ոգիները հալածելու համար: Զարմացած ու անձկութեամբ լի՝ այս

յանկարծական հիւանդութեան սաստկութենէն, Հասան էֆէնտի գորովագին շեշտով մը անոր հարցուց թէ ի՞նչ ունէր: Ան հեծկլտանքներով ընդհատուած ֆրագնետով պատասխանեց թէ «հոգիի ցաւեր կը զգար իր յօգերուն մէջ, թէ անկողնոյն մէջ շարժելու իսկ անկարող էր, թէ կը հասկնար որ այդքան ցաւերու պիտի չկարենար դիմանալ եւ թէ ապահովապէս պիտի մեռնէր այդ հիւանդութենէն, քանի որ պիտի չկարենար դիմել այն միակ դարմանին որ կարող էր զինք ազատել, եւ որ Համամին ջերմարանին մէջ երկար լուգանք մը առնէր էր:» Ոչինչ ուտել ուզեց այդ օրն ու հետեւեալ օրը, հեծեց, լացաւ, ողբաց, ա՛յնքան, ա՛յնքան որ ամուսինը, անոր վիճակին վրայ իրապէս մոտահոգ, վերջապէս որոշեց զայն ինքն իսկ տանիլ Համամը երբ ի վիճակի ըլլար դուրս ելլելու:

«Ուրեմն, շաբաթ օրը երթանք, ըսաւ Համիտա՝ աչքերը խոնարհեցնելով որպէս զի անոնց ուրախութեան շողիւնը չտեսնուի:

★ ★ ★

Շաբաթն անցաւ դանդաղութեամբը ամառ ատեն Րամազանի օրուան մը, որ ծարաւէն տոյրող հաւատացեալներուն անվերջանալի կ'երեւայ, եւ շաբաթ օրը հասաւ, վրդովիչ ու յուզիչ ինչպէս ամէն ինչ որ լեցուն է անակնկալով:

Գլխէն միջնեւ ոտքը քօղարկուած, Համիտա դուրս ելաւ տունէն. առջեւէն կը քալէր ամուսինը, ու ետեւէն՝ տղեկ մը որ գլխուն վրայ կը կրէր կողով մը ուր դրուած էին ալլազան դոյներով մետաքսէ ծրարներու մէջ ճերմակեղէնը, փոխնորդ շրջապէստը, անուշահոտութիւններ, հինա, եւ պղնձէ, քանդակուած փայտէ ու փղոսկրէ բոլոր այն առարկաները որ բաղնիքի օրուան մը համար անհրաժեշտ են:

Հոն երթալու համար, պէտք էր իր գրացի երիտասարդ Պէյին տան առջեւէն անցնիլ, և ըստ որում ան մոռցած չէր փո-

դոցը առաստիճան ուղղելու մասին իրեն եղած յանձնարարութիւնը, այդտեղ փողոցը ցեխի աղուոր լճի մը փոխուած էր:

Համիտա ոտքի ծայրերուն վրայ կը քաշէր, զգուշութեամբ ընարելով է՛ն քիչ աղտոտած տեղերը, բայց փողոցը այնքան ցեխոտ էր, քարերը այնքան սրածայր ու տիկով այնքան լայրձուն, որ երբ Համիտա չհրապուրէր մեղսակցին տանը գրան առջեւ հասաւ, ոտքը սահեցաւ, հաւասարակշռութիւնը կորսնցուց եւ մէկ ծունկին վրայ ինկաւ վիրաւորուած թոշունի ճիւղեր արձակելով: Հասան էֆէնիսի անոր օգնութեան փութաց, ոտքի հանեց զայն, եւ տեսնելով որ անոր ձեռքերը, կոշիկները եւ մեկայային վարի մասը ողբալի կերպով կեղտոտած էին, փորձեց թաշկ ինակով սրբելով զանոնք մաքրել: Բայց ցեխի արտաններն աւելի տարածել միայն յաջողեցաւ:

— Մարգարէն վկայ, ըստ նեղսիրտ շեշտով, ասկից քալ, որ անդին չեմ երթար այս վիճակին մէջ: Սա դուռը պիտի զարնեմ քիչ մը ջուր ուղեւում համար, որպէս զի ձեռքերս ու մեկայայիս քղանցքը լուամ: Ու դեռ ամուսինը զինքն արգելելու համար շարժում միտի ընել չկրցած, արդէն զարկած էր դուռը, որ իսկոյն բացուեցաւ:

Շուտ մը ներս սարդեցաւ, բայց ոչ այնքան շուտ որպէս զի ամուսինը, իր այս անպատշաճ եւ անլուր կերպով յանդուգն արարքէն դժգոհ, ժամանակ չունենար անոր լայն ու ծփուն մեկայայի մէկ ծայրէն բռնելու, հրամայելով անոր որ չմտնէ ներս:

Այն ատեն, հոն, մինչ իսկոյն նախանձօտը դրան առջեւ կը հսկէր, ձեռքը բռնած գլուսական մը որ — կը կարծէր — իր պատիւը կարող էր վտանգէ գերծ պահել, ինչ որ այս տեսակ պարագանքերու մէջ կը պատահի՝ պատահեցաւ, ու Համիտա շուրջը շրջեց իր վրէժխնդրութիւնը անպատիժ, ինչ որ կը տեսնուէր, ասոր արժէքն ու վայելքը կրկնապատկեց:

★ ★ ★

Բ.

ԱՏԻՎԱ ԱՄԵՆՈՒՆ ԳՈՐԾԸ ԶԷ

Ձէյնապ ու Ֆաթմա՝ Ամ-Ալի ասաղ-ձագործին երկու որդիներուն հետ ամուսնացած էին: Այս վերջիններն ալ արհեստով ասաղձագործ էին, բայց՝ թէեւ երկուստեք ու գործունեայ, իրենց ընտանիքին օրապահիկը դժուարութեամբ կը ճարէին, եւ Ֆաթմա կը գանգատէր թէ չէր կրնար տանը ծախքերուն հասնիլ, թէ աւելի շատ էին զրկանքի քան հրճուանքի օրերը:

Բայց ինչ որ իր միտքը կը չարչարէր ու իր սրտին մէջ նախանձի զգացում մը կ'արթնցնէր անգիտակցաբար, — որովհետեւ պարզամիտ էր ու բարի — այն էր որ իր ներքէն, Ձէյնապ, կը յաջողէր, ունի շաքար թակահով, ամէն օր տաք կերակուր ունենալ, շնորհքով հագուելի եւ իր տղաքը մաքուր կերպով հագուեցնել:

Ի՛նչ էր անոր գաղտնիքը...

Որովհետեւ ի՛նչպէս հաւատար թէ առանց հօր ու օտար ազդեցութեան մը կարելի էր այդ համեստ գումարով մշտապէս բարեկեցութեան այդ հրաշքն իրականացնել:

Արդեօք գիտուածով գանձ մը գտած էր: Ամէն ոք գիտէ թէ եգիպտոսի հողը իր ծոցին մէջ թաքուցած կը պահէ անհատն ու աներեւակայելի հարուստութիւններ փարաւորներու արքայական դամբարաններուն մէջ փակուած:

Արդեօք յաջողեր էր, զօրաւոր թովչութիւններով, բարեացակամ ոգի՞ մը իր մօտ կանչել, մինչ այն ձիւներն որոնց մասին հազարաւոր հրաշալի գրուագներ կը պատմեն: Հարցումներով կը յարցնեցին իր ներքէն, բայց Ձէյնապ իր բոլոր հարցաւորութիւններուն քաջշուքներով ու չարածիւրութիւններով միայն կը պատասխանէր: Վերջապէս օր մը, Ֆաթմա յարցունքներէն ու ազգայնաբանութենէն սիրտը շարժելով, ըսաւ անոր.

— Քուրբի՛կ, քեզի կը յայտնեմ իմ գաղտնիքս եթէ հաւանիս որ նախ քեզ փորձի մը ենթարկեմ:

— Կրակին մէջէն իսկ կ'անցնիմ, եթէ ատ ուզես ինձմէ, պատասխանեց մանկամարդ կինը եռանդազին:

— Պէտք չկայ բնաւ որ կենանքդ վտանգես, սիրուն տատրակ: Քեզմէ խնդրելիքս շատ պարզ է ու հաճելի: Այստեղ թէ ինչ վաղն առտու քեզի պիտի զրկեմ երկու աղանի եւ խուրձ մը մեղուխիէ: Պիտի եփես եւ ուտես առանց որ շուրջդ գտնուողները, մանաւանդ ամուսինը, այդ մասին ո եւ է բան իմանան: Եթէ այս բանն ընելու կարող ըլլաս, պիտի հաւատամ որ բաւական խորհրդապահ եւ ճարպիկ ես որպէս զի կարելի ըլլայ գաղտնիք մը քեզի վրայ տալի:

Չէ՛յնապ իր խոստումը գործադրեց, եւ Ֆաթմա, խոհեմութիւնն ունենալով սղաքը կանուխէն իրենց մեծ մօր տունը զրկելու, իսկոյն գործի սկսաւ: Աղանիները փեսայատեց եւ ջուրը դրաւ խաշելու, մեղուխիէն մաքրեց եւ անոր թերթերը բարակ բարակ կտրեց, սխտորի պէնդները ստըկեց ու համեմեքու հետ ծեծեց, յետո՛ք կարագի մէջ տապելէ էտքը՝ գոյացած՝ կառնուրդը արգանակին մէջ նետեց: Ամէն ինչ կէսօրէն առաջ պատրաստ ըլլալով, շուտ մը կերաւ, ամանները լուաց եւ պատուհանները բացաւ տապիւսած սխտորի եւ համեմներու յամառ հոտը փարատելու համար:

Բայց իրիկուան, մինչդեռ աշխատութենէն դարձող ամուսինը կը դիմաւորէր՝ սիրալիլ ու ժպտուն, այս վերջինը մեծաբաց ու զարմացկոտ աչքերով վայն շշտակի դիտելով, ըսաւ.

«Ի՛նչ ես ըրեր, կնի՛կ, որ ակռայիդ մէկը այդպէս կոտրեր է:

— «Ես՝ Հայրիպի, պատասխանեց կինը, չեմ գիտեր ինչո՞ւ աչքդ պղտոր կը տեսնէ, ոչ մէկ ակռայ ունիմ՝ կոտրած:

Այն ատեն Հասան, աւելի մօտէն նայելով անոր, քահաճ մը փրցուց.

— Այդ անպիտան սեւ ծակը, ըսաւ, մեղուխիէի կտոր մըն է եղեր ակռայիդ փակած. ուրեմն մեղուխիէ՞ ես կերեր:

— Այո՛, թոթովեց Ֆաթմա շփոթած ու վրդովուած: Չէ՛յնապ այս առտու քիչ մը զրկած էր ինծի եւ...»:

Հետեւեալ օրը շիտակ իր ներքը տու. նը առաւ շուհչը:

— Ի՛նչ լուր, հարցուց Չէ՛յնապ:

— Սիրելի քո՛յրս... էրիկս եղածը գիտցաւ... առանց որոշ գիտնալու... ակռաներու փակած մեղուխիէի կտոր մը զիս մատնեց, բայց իրեն հաւատացուցի թէ գուն էր որ ինծի կտոր մը զրկած էիր...

Չէ՛յնապի աչքերը չարահճի շողիւն մ'ունեցան ու գծուարաւ ժպիտ մը կրցաւ զսպել:

— Փոքրի՛կ յիմար, ըսաւ փորձառու մեծի ձեւեր աննկով, ուրեմն դուն իրա՞ւ կարծեցիր այս մոգական գաղտնիքի պատմութիւնը:

«Ես պարզապէս ուզեցի քու միամտութեանդ վրայ խնդալ եւ այդ հաճոյքն ինքզինքիս հրամցուցի, խոստովանէ՛ սաւկայն որ իմ կատակս շատ չար չեղաւ, քանի որ անոր ջնորհիւ լաւ ճաշ մ'ըրիր:

Ու Չէ՛յնապ իրեն պահեց իր գաղտնիքը, որովհետեւ իրօք ճին մը կար իր կեանքին մէջ եւ դիւթական առաձնոց մը ուր երբեմն կ'երթար վայն գտնել. բայց այդ վտանգաւոր յարաբերութիւնները կը սիրեն խորունկ խորհուրդի մը մէջ ծածկուած մնալ եւ յիմարութեան մեծը պիտի ըլլար կնոջ մը վստահիլ այդպիսի գաղտնիքներ՝ որոնցմէ կախում ունին պատիւն ու կեանքը, երբ այդ կինն այնքան անճարակ է որ մեղուխիէով կերակուր մը ուտելու ատեն իսկ ինքզինքը կը մատնէ:

ՎԻՔԹՈՐԻԱ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Աղետանգործա